Այնուամենայնիւ, հակառակ Թեքինսկիի թափած ջանքերի, հայկական զօրքերը, ինչպէս տեսանք, առանց դիմադրութեան հանձնուելու, գրաւեցին Կարսն էլ, Շարուր—Նախիջևանն էլ: Դրանից յետոյ, սկսուեց ազրբէջանեան գործակալների դաւերի մի նոր շրջան:

Մայիս 10-ին Թեքինսկին խորհուրդ է տալիս իր կառավարութեան. «Բոլշևիկների կողմից Բաքուին վտանգ սպառնալը պատրուակ բռնեցէք և խնդրեցէք անգլիացիներին, որ Կարսի թնդանօթները փոխադրեն Բաքու»:*) Յունիս 4-ին, թէ՝ «Որև է պատճառ բռնելով՝ յետաձգեցէ՛ք Հայաստանի երկաթուղիների համար նաւթ ուղարկելը, որովհետև Նախիջևանի շրջանում դէպքեր են սպասւում»: Եւ նոյն օրը, № 130 հեռագրով. «Կամաւորական Բանակի յառաջխաղացումը հայերին ուրախութիւն է պատճառում... Եթէ մեր յարաբերութիւնը Կամ. Բանակի հետ լաւի, հայերը թշնամական դիրք կը բռնեն դէպի մեզ, ուստի անհրաժեշտ է Հայաստանի համար վտանգ ստեղծել Շարուր-Նախիջևանում: Գործը կազմակերպելու համար անյապաղ պէտք է դրամ բաց թողնէք: Իմ ձեռք առած միջոցների շնորհիւ Շարուրը, Նախիջևանը և Օրդուբաթը արդէն միացել են մէկ ազգային խորհրդի մէջ, որը մշտական յարաբերութեան մէջ է ինձ հետ»:

Յունիս 8-ին արտ. գործ. նախ. Ջաֆարովը հեռագրում է կառավարութեան հաւանութիւնը. «Պատասխան № 130 հեռագրի: Հաւանութիւն եմ տալիս Շարուր—Նախիջևանի հետ կապ հաստատելու նպատակով ձեր ձեռնարկած միջոցներին. համաձայն եմ դրամ տալ զինուորական կազմակերպութեան համար: Հաղորդեցէք ի՞նչպէս և ում բաց թողնել դրամը: Հաղորդեցէք, թէ ի՞նչ միջոցներով պիտի իրագործուեն մատնանշած ծրագիրն ու կազմակերպութիւնները»:

Յունիս 11-ին Թեքինսկին պատասխանում է. «Շարուր—Նախիջևանի շրջանը ունի մօտ 6000 կիսականոնաւոր զօրք՝ ձիաւորով, թնդանօթով ու գնդացիրներով: Ռազմունակութեամբ յետ չեն մնում հայերից, որոնց օժանդակում են անգլիացիները: Պատերազմական գործողութիւնների ժամանակ զինուած ուժերի թիւը կարող է հասնել մինչև 10,000: Կարծում եմ, որ մենք պէտք է պահենք միայն 6000 ասկեար՝ հին հրամանատարական կազմի հետ միասին՝ տեղաւորելով նրանց այն վայրերում, ուր գտնւում էին մինչև հայերի գալը, իսկ մի մասն էլ Զանգեզուրի սահմանի վրա՝ լեռներում: Ծախքերի ստուգումը լիովին երաշխաւորել դժւար է: Գործի կարեւորութիւնը ստիպում է, որ հաշուենք մի քանի հնարաւոր զեղծումների հետ: Դրամը հրամանատարներին բաց կը թողնեմ մաս-մաս, բացի այդ, վերահսկիչներ կը նշանակեմ: Վաղը մեկնում է զինուորական կցորդը. լսեցէք նրա զեկուցումը և միասին քննեցէք: Այսօր սուրհանդակ ուղարկեցի Նախիջևան»:

Ու նոյն օրը նոր հրահանգ Բաքու. «Ո՛չ մի փունտ նաւթ ու մազութ բաց չթողնէք Հայաստանին»:

Յունիս 22-ին Թեքինսկին հեռագրում է. «Թւում է, որ այժմ Ազրբէջանը Հայաստանից բացի՝ ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առանձին ուշադրութիւն դարձնել: Պէտք է քիւրդ Սմկոյին քաշել մեր կողմը, որի համար լիազօրութիւն եմ խնդրում ինձ. զինուորական կցորդին հարց ու փորձ արէք Սմկոյի մասին»:

---

*) Կարսը գրաւելուց յետոյ, անգլիացիները բերդի թնդանօթների ու ռազմամթերքի մի մասը փոխադրեցին Կամաւորական Բանակին: